ԱՅԲԲԵՆԱՐԱՆ եվ հեգարան
նոր կարգավ սկսող դպրոցաց
համար: Թեոդոսիա, 1844 թ.

2004



Ցուլ, Պուղա:



Այծ, Քէչի:



Կատու



Շուն



Արծիւ, Գարթալ:



Արագիլ, Լէյլէկ

491.99-81



Բու , Պայղուշ :



Ցին , Չայլագ :



Ճայ , Մարթի :



Կաքաւ , Քէքլիք :



Կրիայ , Թոսպաղա :



Վարդ

# ՕԳՆԵԱՆ ՀՈԳԻ ՍՈՒՐԲ

Համար . ա :

## Բոլոր գիր :

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ

հ ձ ղ ճ մ յ ն շ ո չ պ ջ ռ ս վ

տ ր ց ւ փ ք և օ ֆ

---

Համար . բ :

## Նօտր գիր :

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ

հ ձ ղ ճ մ յ ն շ ո չ պ ջ ռ ս վ

տ ր ց - փ ք և օ ֆ

---

Համար . գ :

## Ձայնաւոր գիրերը :

ա ե է ը ի ո օ ու իւ

## Բաղաձայն գիրերը :

բ գ դ զ թ ժ լ խ ծ կ հ ձ ղ ճ մ յ ն շ

չ պ ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք ֆ

Համար . Դ ։

Իրարու նման գիրերը ։

ատ բր գդ եէ զղ ըւ ժծ կխ

հձ յց շչ ոս ջվ ււ

Համար . Ե ։

Հեգ ։

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ա | ե | է | ը | ի | ո | օ | ու | իւ |
| աբ | եբ | էբ | ըբ | իբ | ոբ | օբ | ուբ | իւբ |
| ագ | եգ | էգ | ըգ | իգ | ոգ | օգ | ուգ | իւգ |
| ադ | եդ | էդ | ըդ | իդ | ոդ | օդ | ուդ | իւդ |
| ազ | եզ | էզ | ըզ | իզ | ոզ | օզ | ուզ | իւզ |
| աթ | եթ | էթ | ըթ | իթ | ոթ | օթ | ութ | իւթ |
| աժ | եժ | էժ | ըժ | իժ | ոժ | օժ | ուժ | իւժ |

Համար . Զ ։

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| է | ա | ե | ը | ի | ո | օ | ու | իւ |
| էլ | ալ | ել | ըլ | իլ | ոլ | օլ | ուլ | իւլ |
| էխ | ախ | եխ | ըխ | իխ | ոխ | օխ | ուխ | իւխ |
| էծ | ած | եծ | ըծ | իծ | ոծ | օծ | ուծ | իւծ |
| էկ | ակ | եկ | ըկ | իկ | ոկ | օկ | ուկ | իւկ |
| էհ | ահ | եհ | ըհ | իհ | ոհ | օհ | ուհ | իւհ |
| էձ | աձ | եձ | ըձ | իձ | ոձ | օձ | ուձ | իւձ |

Համար. Է:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ի | ա | ե | է | ը | ո | օ | ու | իւ |
| իղ | աղ | եղ | էղ | ըղ | ող | օղ | ուղ | իւղ |
| իճ | աճ | եճ | էճ | ըճ | ոճ | օճ | ուճ | իւճ |
| իմ | ամ | եմ | էմ | ըմ | ոմ | օմ | ում | իւմ |
| իյ | այ | եյ | էյ | ըյ | ոյ | օյ | ույ | իւյ |
| ին | ան | են | էն | ըն | ոն | օն | ուն | իւն |
| իշ | աշ | եշ | էշ | ըշ | ոշ | օշ | ուշ | իւշ |

Համար. Ը:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| օ | ա | ե | է | ը | ի | ո | ու | իւ |
| օչ | աչ | եչ | էչ | ըչ | իչ | ոչ | ուչ | իւչ |
| օպ | ապ | եպ | էպ | ըպ | իպ | ոպ | ուպ | իւպ |
| օջ | աջ | եջ | էջ | ըջ | իջ | ոջ | ուջ | իւջ |
| օռ | առ | եռ | էռ | ըռ | իռ | ոռ | ուռ | իւռ |
| օս | աս | ես | էս | ըս | իս | ոս | ուս | իւս |
| օվ | ավ | եվ | էվ | ըվ | իվ | ովվ | ուվ | իւվ |

Համար. Թ:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| իւ | ա | ե | է | ը | ի | ո | օ | ու |
| իւտ | ատ | ետ | էտ | ըտ | իտ | ոտ | օտ | ուտ |
| իւր | ար | եր | էր | ըր | իր | որ | օր | ուր |
| իւց | աց | եց | էց | ըց | ից | ոց | օց | ուց |
| ,, | աւ | եւ | ,, | ,, | իւ | ու | ,, | ,, |
| իւփ | ափ | եփ | էփ | ըփ | իփ | ոփ | օփ | ուփ |
| իւք | աք | եք | էք | ըք | իք | ոք | օք | ուք |
| իւֆ | աֆ | եֆ | էֆ | ըֆ | իֆ | ոֆ | օֆ | ուֆ |

## Համար. Ժ :

ա ե է ը ի ո օ ու իւ
բա բե բէ բը բի բո բօ բու բիւ
գա գե գէ գը գի գո գօ գու գիւ
դա դե դէ դը դի դո դօ դու դիւ
զա զե զէ զը զի զո զօ զու զիւ
թա թե թէ թը թի թո թօ թու թիւ
ժա ժե ժէ ժը ժի ժո ժօ ժու ժիւ

## Համար. ԺԱ :

ե ա է ը ի ո օ ու իւ
լե լա լէ լը լի լո լօ լու լիւ
խե խա խէ խը խի խո խօ խու խիւ
ծե ծա ծէ ծը ծի ծո ծօ ծու ծիւ
կե կա կէ կը կի կո կօ կու կիւ
հե հա հէ հը հի հո հօ հու հիւ
ձե ձա ձէ ձը ձի ձո ձօ ձու ձիւ

## Համար. ԺԲ :

ը ա ե է ը ի ո օ ու իւ
ղը ղա ղե ղէ ղի ղո ղօ ղու ղիւ
ճը ճա ճե ճէ ճի ճո ճօ ճու ճիւ
մը մա մե մէ մի մո մօ մու միւ
յը յա յե յէ յի յո յօ յու յիւ
նը նա նե նէ նի նո նօ նու նիւ
շը շա շե շէ շի շո շօ շու շիւ

Համար · ԺԳ։

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ո | ա | ե | է | ը | ի | օ | ու | իւ |
| չո | չա | չե | չէ | չը | չի | չօ | չու | չիւ |
| պո | պա | պե | պէ | պը | պի | պօ | պու | պիւ |
| ջո | ջա | ջե | ջէ | ջը | ջի | ջօ | ջու | ջիւ |
| ռո | ռա | ռե | ռէ | ռը | ռի | ռօ | ռու | ռիւ |
| սո | սա | սե | սէ | սը | սի | սօ | սու | սիւ |
| վո | վա | վե | վէ | վը | վի | վօ | վու | վիւ |

Համար · ԺԴ։

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ու | ա | ե | է | ը | ի | ո | օ | իւ |
| տու | տա | տե | տէ | տը | տի | տո | տօ | տիւ |
| րու | րա | րե | րէ | րը | րի | րո | րօ | րիւ |
| ցու | ցա | ցե | ցէ | ցը | ցի | ցո | ցօ | ցիւ |
| ւու | ւա | ւե | ւէ | ւը | ւի | ւո | ւօ | ւիւ |
| փու | փա | փե | փէ | փը | փի | փո | փօ | փիւ |
| քու | քա | քե | քէ | քը | քի | քո | քօ | քիւ |
| Փու | Փա | Փե | Փէ | Փը | Փի | Փո | Փօ | Փիւ |



### Համար. ժե :

## Երկաթագիր :

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ
Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ
Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ
Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Ք
Օ Ֆ

### Համար. ժզ :

## Մ`խալանկ Բառեր :

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ազգ | Ըստ | Կաւ | Ներս | Սուրբ |
| Բեր | Թել | Հող | Շուն | Վարդ |
| Գիր | Ժեռ | Ձայն | Ոտք | Տէր |
| Դեւ | Ինչ | Ղաստ | Չորս | Րօն |
| Երբ | Լեռ | Ճանկ | Պէտք | Ցից |
| Զէն | Խաչ | Մարդ | Ջուր | Քար |
| Էրդ | Ծոց | Յոյս | Ռահ | Ֆիլ |

Ես եմ :
Դուն ես :
Ան է :
Ան ո՞վ է :
Ես հոս եմ :
Դուն ո՞ւր ես :
Հոս չե՞ս մի դուն :

Հաց բեր հոս :
Քիչ հաց կայ :
Հաց չի կայ :
Ջուր մը տուր :
Ի՞նչ ձայն է :
Մարդ մը կայ հոն :
Թող վեր գայ :

Համար. ԺԷ։

## Միավանկ բառեր ։

| | | | |
|---|---|---|---|
| Այծ | Իսկ | Յարդ | Տանձ |
| Բեն | Լոյս | Նուշ | Րուն |
| Գեր | Խոր | Շունչ | Ցանկ |
| Դիր | Ծեր | Ոտ | Իւծ |
| Երկ | Կաթ | Չափ | Փլուր |
| Զատ | Հոր | Պինտ | փոս |
| Էնկ | Ձուկ | Ջինջ | Քաջ |
| Ընդ | Ղեն | Ռոն | Քօշ |
| Թագ | Ճար | Սիրտ | Օդք |
| Ժիր | Միս | Վաշ | Ֆրշ |

Սա ի՞նչ է ։
Այծ մը կայ հոս ։
Շուտ ներս բեր ։
Վար դիր հոս ։
Թող տուր որ գայ ։
Քիչ մը խոտ տուր ։
Հիչ խոտ չի կայ ։
Աս մեր ձին չէ ։
Մենք հոս ենք ։
Ի՞նչ պէտք է ։
Շատ գործ կայ ։
Հոս լոյս չի կայ ։
Հոն լոյս կայ ։
Ո՞ւր տեղ լոյս կայ ։

Անութ չէ՞ որ ։
Հոս հոր մը կայ ։
Պինտ խոր է ան ։
Ջուր լից հոս ։
Հաց մը բեր վար ։
Հաց ու միս կեր ։
Չէ ես կուշտ եմ ։
Հինգ օր պաք է ։
Մէկ մեծ մարդ մը ։
Խիստ ժիր մարդ մը ։
Ե՞րբ հոս էր ան ։
Աս ի՞նչ գիրք է ։
Սուրբ գիրք է աս ։
Փառք քեզ ո՛վ տէր ։

Համար . ժբ :

Միավանկ բառեր :

| | | | |
|---|---|---|---|
| Աչք | Իւրք | Յայտ | Տուն |
| Բայց | Լուռ | Ներս | Րէնկ |
| Գիրք | Խելք | Շուտ | Ցուրտ |
| Դանկ | Ծունկ | Ունկ | Ւխւս |
| Եռք | Կամք | Չարք | Փառք |
| Զարդ | Հունտ | Պարտք | Փոր |
| Էօտ | Ձեռք | Ջուխտ | Քոյր |
| Ըուղ | Ղողն | Ռենտ | Քուն |
| Թերթ | Ճեղ | Սուտ | Օշտ |
| Ժանտ | Մեղք | Վերջ | Ֆարտ |

Ես սուտ չեմ :
Ո՞վ սուտ է :
Դուն լուռ չե՞ս մի :
Ես միշտ լուռ եմ :
Ի՞նչ ցուրտ օր է
Աս ցո՞ւրտ է որ :
Ես շատ տաք եմ :
Դուն տաք չե՞ս մի :
Չէ ես ցուրտ եմ :
Ան ի՞նչ հոտ է :
Հո՛ն վարդ մը կայ :
Շուտ հոս բեր ան :
Ի՞նչ լաւ վարդ է :
Մեղք որ քիչ է :
Բայց շատ չի կար :

Տուն մը կայ հոս :
Մեծ տուն մը է :
Շատ ցած է ան :
Ցած չէ բարձր է :
Հոս ո՞վ կայ :
Մէկ շուն մը կայ :
Խիստ մեծ շուն է :
Ներս թող չի գայ :
Չէ ներս թող գայ :
Ջուր մը բեր վեր :
Չորս գիրք կար հոս :
Հոս գիրք չի կայ :
Սա տար ներս դիր :
Այսօր ի՞նչ է :
Այսօր տօն չէ :

## Համար . ԺԹ :

### Երկու վանկով բառեր :

| | | |
|---|---|---|
| Անուշ | Խըլրատ | Չամիչ |
| Բարի | Ծաղիկ | Պարտէզ |
| Գինի | Կարդալ | Զըրկեր |
| Դանակ | Հոգնած | Թուքեն |
| Երես | Ձըմեռ | Սեղան |
| Զաւակ | Դուկաս | Վերնալ |
| Նըրած | Ճըրագ | Տարբեր |
| Ընկեր | Մօրուք | Բախճան |
| Թըռչուն | Յիսուս | Ցաւել |
| Ժամկոչ | Ներսէս | Փափաք |
| Ինչպէս | Շընորհք | Քաղաք |
| Լուսին | Ոսկոր | Օրէնք |

Բարի լոյս
Ի՞նչպէս ես :
Աղէկ եմ :
Դուն ի՞նչպէս ես :
Շատ աղէկ եմ :
Գիրքըդ ո՞ւր է :
Տունը մնացայ :
Ինչո՞ւ մնացար :
Շուտ գընայ բեր :
Այլըրս հոն չէ :
Տունը մարդ չի կայ :
Անոնք ժամ գացին :
Ես շատ հոգնած եմ :

Հոս է գիրքըդ :
Համարըդ գիտե՞ս :
Եկոր խըլրատ տամ :
Կարդա որ լըսեմ :
Ինծի ընկեր եղիր :
Մեր տունը կուգա՞ս :
Մեծ պարտէզ ունինք :
Շատ ծաղիկ կայ հոն :
Վարդը կարմիր է :
Անուշ հոտ ունի :
Տանձի ծառ ալ կայ :
Փըրցու մէկ հատ մը :
Նայինք հասո՞ւն է :

## Համար. Ի :

### Երկու վանկով բառեր :

| | | |
|---|---|---|
| Անձրև | Խոնարհ | Չափել |
| Բըժիշկ | Ծառայ | Պարան |
| Գարի | Կանանչ | Ջընջոց |
| Դըպիր | Հիւանդ | Ռակայ |
| Երէկ | Ձեղմով | Սիրուն |
| Զօրեղ | Ղենջակ | Վարպետ |
| Էրէց | Ճարպիկ | Տաճար |
| Ընտիր | Մանուկ | Րաբուն |
| Թեթեւ | Յովսէփ | Ցեխոտ |
| Ժառանգ | Նըստել | Փախչել |
| Ինձմով | Շաբաթ | Քարոզ |
| Լեցուն | Ուտել | Օծում |

Եղբայրըս խիստ հիւանդ է :
Երեկ բըժիշկը չեկաւ :
Մեր բըժիշկը վարպետ մարդ է :
Ամառը անձրեւ չի գար :
Լեռները ու դաշտերը կըկանչին :
Կովերը դաշտին մէջ կարծին :
Կովերը մեզի կաթ կուտան :
Ոչխարը կաթ ու բուրդ կուտայ :
Ձիերը յարդ ու գարի կուտեն :
Էշը ծոյլ կենդանի է :
Ծեծ չուտենէ չի գալեր :
Յովսէփը սիրուն տըղայ է :
Մ՚իշտ աղէկ կըսորվէ՛ իր համարը :

Համար. ժա:

Երեք վանկով բառեր:

| | | |
|---|---|---|
| Աղաւնի | Խորագէտ | Զարչարանք |
| Բարեկամ | Ծերունի | Պատուհաս |
| Գեղեցիկ | Կարապետ | Ջախջախել |
| Դատաւոր | Համբերող | Ոահաւոր |
| Երեւան | Զուագեղ | Սասանել |
| Զաքէոս | Ղեկավար | Վարդապետ |
| Լութին | Ճարտասան | Տիրացու |
| Ընթերցող | Մարտիրոս | Բէնատես |
| Թագաւոր | Յատկապէս | Ցնծալով |
| Ժամանակ | Նազելի | Փեսաւէր |
| Իմաստուն | Շնորհել | Քաջութիւն |
| Լուսաւոր | Ողջակէզ | Օրինակ |

Եկուր քեզի հետ խօսինք:
Աս առտու ե՞րբ արթնցար:
Արեւը ծագելուն պէս ելայ:
Աղէկ ժամանակ ելեր ես:
Կանուխ ելլալը շատ օգուտ է:
Կրնաս աղօթք ընել ու կարդալ:
Առտըվան հովը անուշ կըփըչէ:
Թռչունները անուշիկ կերգեն:
Աս ինչ թռչուն է գիտե՞ս:
Աղաւնի կըսեն անոր:
Շատ գեղեցիկ ձայն ունի:
Աղաւնին միամիտ է:
Օձը խորագէտ է:

## Համար · ԻԲ ։

### Երեք վանկով բառեր ։

| | | |
|---|---|---|
| Աբրահամ | Խստասիրտ | Չարութիւն |
| Բանական | Ծիրանի | Պտուտակ |
| Գիտութիւն | Կերակուր | Ջերմութիւն |
| Դատաստան | Հակառակ | Ռամկական |
| Ելանել | Ձայնակից | Սովորոյթ |
| Զարդարանք | Ղեւտայի | Վարագոյր |
| Էական | Ճշմարիտ | Տաղարան |
| Ընտանի | Մարգարէ | Րաբունի |
| Թողութիւն | Յարութիւն | Ցանկալի |
| Ժողովուրդ | Նորոգել | Փառաւոր |
| Իջանել | Շարական | Քրիստոս |
| Լեռնական | Ոսկեղէն | Օրհնութիւն |

Միշտ պէտք է ճշմարիտ խօսիլ ։
Սուտ խօսիլը մեծ մեղք է ։
Աստուծոյ կամքին հակառակ է ։
Իմաստուն մարդը պատւելու է ։
Մեծերուն խրատը պահելու է ։
Պտուտակը տղոց խաղալիկ է ։
Երբեմն խաղալը աղէկ է ։
Խաղալը ու կարդալը մէկ տեղ չըլլար ։
Ամէն բան ժամանակ ունի ։
Խաղի մէջ կռիւ ընելը գէշ բան է ։
Համբերող ըլլալը մեծ բան է ։
Գիտե՞ս Քրիստոս ինչ բառ ։
Համբերողը ինչվան ետքը կապրի բառ ։

Համար . իզ :

Չորս վանկով բառեր :

Առաքինի
Բնակարան
Գեղեցկութիւն
Դարձուցանել
Երախտաւոր
Զինուորական
Էակութիւն
Ընկերութիւն
Թագաւորել
Ժամանակաւ
Իմաստութիւն
Լուսաւորիչ
Խաղաղութիւն
Ծանուցանել
Կաթողիկոս
Համբերութիւն
Ձիադարման
Ղեկավարել

Ամէնուն հետ սիրով վարուէ :
Առաքինի մարդու հետ ընկեր եղիր :
Միշտ ուրիշին աղէկութիւն ըրէ :
Աշխարհի գեղեցկութիւնը անցաւոր է :
Արքայութեան փառքը անվախճան է :
Սուրբերուն բնակարանը երկինքը է :
Երկինքին մեծութիւնը միտքէ դուրս է :
Հայաստանի Լուսաւորիչը ո՞րչափ մեծ է :
Աստուծոյ իմաստութիւնը անհուն է :
Ժամանակնիս պարապ անցունել աղէկ չէ :
Օրէ օր գիտութիւն պէտք է սորվինք :
Գիտուն ազգերը հարուստ են :
Լուսաւորիչ մեր ազգը հաւատքի բերաւ :
Առաջ մեր ազգը կռապաշտ էր :
Համբերութիւնը մեծ առաքինութիւն է :
Ձիադարման ձի նայող ըսել է :

## Համար · ԻԴ ։

### Չորս վանկով բառեր ։

| | |
|---|---|
| Ճըշմարտութիւն | Ռամկավայել |
| Մըխիթարիչ | Սըգաւորել |
| Յորդորելով | Վաճառական |
| Նախատօնակ | Տարակուսել |
| Շընորհալի | Րաբունաբար |
| Ողորմութիւն | Ցըրտացունել |
| Չափահասակ | Փախըստական |
| Պակասեցունել | Քաղաքավար |
| Ջանասիրել | Օժանդակել |

Քըրիստոս է ճըշմարտութիւն ։
Մըխիթարիչ կըսուի Սուրբ Հոգին ։
Անմիտը յորդորելով խըրատէ ։
Ամէն գործիդ մէջ շընորքով շարժէ ։
Որ քեզի շընորհալի տըղայ է ըսեն ։
Անշընորհք տըղան մէկը չի սիրեր ։
Խեղճերուն ողորմութիւն ըրէ ։
Կարդալ չի սորվողը տըգէտ կըմընայ ։
Կարդալը ու գըրելը շատ հարկաւոր է ։
Անով կըրնայ մարդ վաճառական ըլլալ ։
Համարըդ դըժուար ըլլանէ մի տըրտմիր ։
Աշխատէ սիրով յառաջ երթալ ։
Սէրը ամէն բանի կըյաղթէ ։
Գողերը միշտ փախըստական կապրին ։
Քաղաքավար տըղան ամէնուն սիրելի է ։
Օժանդակել եարտըմ ընել ըսել է ։

## Համար. ԻԵ.

### Հինգ վանկով բառեր:

Արեգակնակերպ
Բանաստեղծութիւն
Գոհաբանական
Դիւահարութիւն
Եկեղեցական
Զարմացուցանել
Լացուցանող
Ընդունայնասէր
Թըմրեցուցանել

Ժողովրդապետ
Իմաստասիրող
Լուսափայլութիւն
Խաւարաբընակ
Ծածկագիտութիւն
Կամաւորական
Հայրապետութիւն
Ձեռագործութիւն
Ղենջակալաձառ

Արեգակնակերպ արեգակի պէս ըսել է:
Բանաստեղծութիւնը գիտութիւն է:
Ամէն գիտութիւն գովելի է:
Տըգիտութիւնը մութ ու խաւար է:
Բայց իմաստութիւն պայծառ լոյս մը է:
Դիւահարութիւնը դէշ ախտ է:
Եկեղեցական կըսուին կարգաւորները:
Տիրացուները ու ժամկոչներնալ:
Ընդունայնասէր պարապ բաներ սիրող:
Լուսափայլութիւն լուսի պէս փայլիլը:
Խաւարաբընակ մութը բընակող:
Ծածկագիտութիւն գաղտնի բան գիտնալ:
Կամաւորական կամքով եղած բան:
Կաթողիկոսութիւն հայրապետութիւն մի և նոյն է:
Ղենջակալաձառ փէշտըմալ ծախող:

## Համար. իէ ։

### Վեց վանկով բառեր ։

| | |
|---|---|
| Ճոռոմաբանութիւն | Սասանեցուցանել |
| Աեղանչականութիւն | Վախճանեցուցանել |
| Յիշողականութիւն | Տիեզէրահրաշ |
| Նըմանեցուցանել | Բարունապետութիւն |
| Շընորհաւորութիւն | Ցորենաքաշխութիւն |
| Ուսումնականութիւն | Փեսայացուցանել |
| Չարաբարոյութիւն | Քաղաքավարութիւն |
| Պարկեշտախօսութիւն | Օտարասիրութիւն |
| Ջըրավաճառութիւն | Ֆիզիքականութիւն |

Տուն շինելու արհեստին ճարտարապետութիւն կըսեն ։
Կաղանդին օրը իրարու շընորհաւորութեան կերթան ։
Ուսումնականութիւնը շատ գովելի բան է ։
Փեսայացուցանել փեսայ ընել ըսել է ։
Քաղաքավարութիւն չունեցողը կոպիտ ու անկիրթ է ։
Օտարասիրութիւն օտարները սիրել ու անոնց բարի ընել է ։
Պողոս ու Աբրահամ երկուքնալ օտարասէր էին ։
Անոր համար հըրեշտակներ տեսնելու արժանի եղան ։



Համար . ԻԷ ։

Աստուած ստեղծեց երկինքը ու երկիրը ։
Ու անոնց մէջը եղած ամէն բաները ։
Ադամ նախահայր առաջին մարդը ։
Եւ անոր կողէն իր Եւա կինը ։
Աստուած ստեղծեց նաեւ մեզ ։
Ու ան կը պահէ ամէն օր մեզ ։
Աստուած կուտայ մեր հացը ու հանդերձը ։
Ու մեզի պէտք եղած ամէն բաները ։

Համար . ԻԸ ։

Աստուած ամէնուն վրայ թագաւոր է ։
Ինքը սուրբ ու իմաստուն է ։
Արդար ու ճշմարիտ է ։
Ամենուս երկնաւոր Հայրը է ։

Պէտք է որ զինքը սիրենք ու իրմէն վախնանք ։
Իր պատուիրանքները պահենք ։
Պըզտիկուց զինքը ճանչնանք ։
Ու իրեն կամքը սորվինք ։

Համար. ԻԹ ։

Աստուած հոս է ամէն տեղ է ։
Ամէն բան գիտէ ու կըտեսնէ ։
Երբ որ աղօթք ընենք մեր ձայնը կըլըսէ ։
Մեզի շընորհք կուտայ ու մեզ կըսիրէ ։
Երբ որ մեղք գործենք մեզ կըպատժէ ։
Հոգինիս դըժոխքը կըխըրկէ ։
Անանկ է նէ աղօթք ընենք ։
Որ մեզ մեղքէ ազատ պահէ ։

Համար. Լ ։

Աղէկ տըղաքը Աստուծմէ կըվախնան ։
Թէ որ Աստուած կըսիրես ան ալ քեզ կըսիրէ ։
Ես կըսիրեմ Աստուած որ ան ալ զիս սիրէ ։
Ես կըվախնամ իրմէն ու կըպահեմ իր խօսքը ։
Աստուծոյ խօսքը ճըշմարիտ է ։
Աստուծոյ խօսքը Աստուածաշունչին մէջ է ։
Աստուածաշունչը ամէն գիրքէն աղէկ է ։
Հին և Նոր կտակարանը Աստուածաշունչ է ։

Համար · Լա ։

Աստուած մեզ սիրելուն իր Որդին տըւաւ ։
Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ է ։
Ինքը մեր Տէրը ուփրկիչը է ։
Կատարեալ Մարդ ու կատարեալ Աստուած է ։
Քրիստոս մեզ սիրելուն երկինքէն իջաւ ։
Մեզի համար խաչին վըրայ մեռաւ ։
Աշխարքի մեղքին համար արիւն թափեց ։
Մեզ Աստուծոյ հետ հաշտեցուց ։

Համար · Լբ ։

Յիսուս Քրիստոս խաչվեցաւ ու թաղվեցաւ ։
Երեք օրէն յարութիւն առաւ ։
Քառասուն օր աշխարհի վըրայ կեցաւ ։
Ետքը երկինքը համբարձաւ ։
Դատաստանին օրը նորէն պիտի գայ ։
Արդարները մեղաւորներէն պիտի զատէ ։
Արդարները Արքայութիւն պիտի տանի ։
Մեղաւորները Դըժոխք պիտի խըրկէ ։

Համար · Լգ ։

Ով տէր ինծի շընորհք տուր քեզ սիրել ։
Ու քու պատուիրանքներըդ պահել ։
Նա եւ իմ ընկերներըս սիրել ։
Ու անոնց բարի ընել ։
Ով տէր իմ անմահ հոգիս փըրկէ ։
Սուրբ Արքայութեանըդ արժանի ըրէ ։

Ով Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի ։
Սուրբ Երրորդութիւն անբաժանելի ։

Տասն պատուէր աստուծոյ ։

Ինձմէ. ՚ի զատ ուրիշ աստուած մի՛ պաշտեր ։
Կուռքի առջեւ բնաւ ծունկըդ մի՛ ծըռեր ։
Երդում մընէր Տէր Աստուծոյ անուամբը ։
Ու մի՛ պըղծեր հանգըստութեան սուրբ օրը ։
Քու ծընողքիդ արժանաւոր պատիւ տուր ։
Սպաննութեան մեղքը քեզմէ հեռացուր ։
Զգոյշ կեցիր պիղծ գործքերէն խօսքերէն ։
Մի՛ գողնար , թէեւ խեղճ ես ամմէնէն ։
Սուտ մի՛ խօսիր , ու ստութիւն մի՛ սիրեր ։
Ու ընկերիդ ունեցածին մի՛ ցանկար ։

Տասը պատուիրանքին բովանդակութիւնը ։

Բոլոր սըրտանց Աստուած սիրես ,
Քու ընկերդ ալ քու անձիդ պէս ։





Համար · ԼԴ ։

Արեւը երբոր արեւելքէն կըծագէ՝ ան ատենը առտու է · ուստի պէտք է որ արթըննանք՝ աղօթք ու երկրպագութիւն ընենք Աստուծոյ ։

Ետքը կարդանք , ուտենք , գործենք , կամ դպրատուն երթանք՝ կարդալ գրել ու գիտութիւն սորվինք ։

Արեւը երբոր արեւմուտքէն կըմըտնէ՝ ան ատենը իրիկուն կամ գիշեր է · Թռչունները ոչխարները ձիերը ու ամէն կենդանիները քընանալու կերթան ։

Մենք ալ աղօթք կընենք ու կըքընանանք · ինչու որ քունը հանգըստութիւն կուտայ մարդուն · բայց Աստուած ամենեւին չի քընանար ։

Նայէ՝ վերի պատկերին մէջը գըրուած շընորհալի աղջիկներուն · անոնց մայրը սորվըցուցեր էր իրենց ամէն իրիկուն աղօթք ընել , ու հապա երթալ պառկելու ։

## Դաս · ԼԶ:

Աստուած աշխարհը վեց օրուան մէջ ըստեղծեց:

Կիրակի օրը լոյսը ստեղծեց՝ ու խաւարը լոյսէն զատեց. լոյսին ցորեկ ըսաւ՝ ու խաւարին գիշեր ըսաւ:

Երկուշաբթի օրը երկինքը շինեց, ու աստղերուն կամարին հաստատութիւնը:

Երեքշաբթի օրը երկրին հողը ու ջուրը իրարմէ զատեց. ջուրը ծով ըրաւ՝ ու հողը չորցուց ցամաք ըրաւ՝ ու խոտեր բուսցուց:

Չորեքշաբթի օրը արեգակը լուսինը ու աստղերը շինեց:

## Դաս · ԼԷ:

Հինգշաբթի օրը ծովին մէջ ձուկեր ըստեղծեց, ու օդին մէջ թռչուններ:

Ուրբաթ օրը հողին վրայ չորս ոտքէն կենդանիներ, անասուններ, գազաններ ու սողուններ ստեղծեց:

Ու ամէն բաներէն ետքը Մարդը ստեղծեց իր կերպարանքին պէս, ու անոր անունը Ադամ դրաւ:

Ադամին կողէն Եւա կինը շինեց, ու աս երկուքէն մարդիկ շատցան աշխարհի վրայ:

Շաբաթ օրը հանգչեցաւ Աստուած իր ամէն ստեղծած գործքերէն:

Ուստի շաբաթ օրը հանգստութեան օր ըլլալուն համար, հին ատենը Քրիստոսէն առաջ հրեաները չէին բաներ :

Համար . ԼԷ :

Արեգակին լուսինին ու աստղերուն կեցած տեղը կըսուի Երկինք :

Հողին ու ջուրին որոնց վըրայ մենք կըբընակինք, կըսուի Աշխարհ կամ Երկիր :

Աշխարհը կըլոր գունտ մը է . ու քըսանըչորս ժամին մէջ արեւմուտքէն դէպի արեւելք մէկ անգամ կըդառնայ :

Արեւելք կըսուի արեւին ու լուսինին ելած կողմը :

Աշխարհըս չորս կողմ ունի . Արեւելք . Արեւմուտք . Հարաւ . Հիւսիս :

Երբոր երեսըդ Արեւելքին դարձունես, կըռնակիդ կողմը Արեւմուտք է . աջ ձեռքիդ կողմը Հարաւ է, ձախ ձեռքիդ կողմը Հիւսիս է :

Համար . ԼԸ :

Ժամանակ կըսուի աշխարհի ստեղծուելէն մինչեւ վերջը եղած ատենը :

Ժամանակը երեք կըբաժնուի . Ներկայ, Անցեալ, ու Ապառնի :

Ներկայ կըսուի հիմակու ժամը :

Անցեալ կըսուի երէկ կամ առջի ատենները :

Ապատունի կրակի վաղը կամ գալու տունները
Անկէց 'ի զատ ժամանակը եօթը կըբաժնըվի.
Տարի · Ամիս · Շաբաթ · Օր · Ժամ · Րոպէ · Վայրկեան:

Աչք գոցել բանալու չափ ատենը մէկ վայրկեան մը է:

Վաթսուն վայրկեանը մէկ րոպէ մը կընէ:
Վաթսուն րոպէն մէկ ժամ մը կընէ:
Քսանըչորս ժամը մէկ օր մը կընէ:
Եօթը օրը շաբաթ մը կընէ:
Երեսուն օրը ամիս մը կընէ:
Տասներկու ամիսը տարի մը կընէ:
Մէկ տարին ալ երեք հարիւր վաթսունըհինգ օր ունի:

---

## Համար · ԺԸ:

Ամիսներուն անունները ասոնք են:

| | | |
|---|---|---|
| Յունվար, | Մայիս, | Սեպտեմբեր, |
| Փետրվար, | Յունիս, | Հոկտեմբեր, |
| Մարտ, | Յուլիս, | Նոյեմբեր, |
| Ապրիլ, | Օգոստոս, | Դեկտեմբեր: |

Յունվար · Մարտ · Մայիս · Յուլիս · Օգոստոս · Հոկտեմբեր · Դեկտեմբեր · աս ամիսները երեսունըմէկական օր ունին:

Ապրիլ · Յունիս · Սեպտեմբեր · Նոյեմբեր · աս ամիսներն ալ երեսունական օր ունին:

Փետրվարը քսանըութը օր ունի · բայց չորս տարին հեղ մը քսանըինը օր կըլլայ, ու

ան տարին Նահանջ տարի կըսվի :
Յունվարին առջի օրը Կաղանդ է :

Համար . խե :

Մէկ տարին չորս եղանակ ունի . Գարուն . Ամառըն . Աշուն Ձմեռ :

Ամէն մէկ եղանակն ալ իրեքական ամիս ունի :

Մարտ . Ապրիլ . Մայիս . աս ամիսները Գարուն է . ծառերը կըկանանչնան , ծաղիկները կը բացվին :

Յունիս . Յուլիս . Օգոստոս . աս ամիսները Ամառ է . խընձորը , տանձը , խաղողը , ու ուրիշ պտուղները կըհասնին :

Սեպտեմբեր . Հոկտեմբեր . Նոյեմբեր . աս ամիսները Աշուն է . ծառերուն տերևները կը թափի :

Դեկտեմբեր . Յունվար . Փետրվար . աս ամիսները Ձմեռ է . շատ անձրև ու ձուն կուգայ ու ցուրտ կըլլայ :

Համար . խզ :

Օրերուն անունները ասոնք են :

ԿԻՐԱԿԻ

| | |
|---|---|
| Երկուշաբթի , | Հինգշաբթի , |
| Իրեքշաբթի , | Ուրբաթ , |
| Չորեքշաբթի , | Շաբաթ : |

Շաբաթ ըսելը հանգիստ ըսել է . որ Քրիստոսէն առաջ Աստուած պատուիրեց հրեաներուն սուրբ պահել աս օրս :

Կիրակի ըսելը Յունարէն Տէրունի ըսել է . այսինքն Տէրոջը օրը , կամ Աստուծոյ օրը ըսել է :

Առաքեալները 'ի պատիւ Քրիստոսի յարութեան՝ Շաբաթ օրվան սրբութիւնը Կիրակի աւուր փոխեցին . ու անոր համար մենք կըպարտաւորինք Կիրակի օրը սուրբ պահել . խաղալէն՝ ժուռ գալէն՝ ու ամէն մարմնաւոր գործքերէն ետ կենալ . սուրբ Եկեղեցի երթալ , Աստուծոյ անունը փառաբանելով աղօթք ընել , ու մեղքերնուս համար թողութիւն խնդրել :

Համար . խէ :

Ո՛վ Տղաք ու Աղջիկներ , “ Աստուծոյ Սուրբ Հոգին մի տրտմեցունէք ” մեղք գործելով :

Մէկ դի ձըգեցէք բարկութիւնը , սըրդողկութիւնը , չարութիւնը , հայհոյանքը , անպարկեշտ խօսքերը . իրարու սուտ մի զըրուցէք :

Գթած եղէք , ողորմած , անուշ , խոնարհ , հեզ . իրարու յանցանք ներեցէք , ինչպէս որ Աստուած Քրիստոսի համար ձեզի կըներէ :

Աստուծոյ հետեւեցէք սիրելի զաւակներու պէս . ու սիրով գացէք , ինչոր որ Քրիստոս

ալ մեզ սիրեց՝ ու ինքզինքը մեզի համար մատնեց ; Աստուծոյ պատարագ ու անուշահոտ զոհ ըլլալով :

Համար. խզ :

| Մարմինին գործքը : | Հոգիին պտուղը : |
|---|---|
| Կռապաշտութիւն , | Սէր , |
| Կախարդութիւն , | Խնդութիւն , |
| Թշնամութիւն , | Խաղաղութիւն , |
| Խեռութիւն , | Երկայնմտութիւն , |
| Նախանձութիւն , | Քաղցրութիւն , |
| Բարկութիւն , | Խոնարհութիւն , |
| Հակառակութիւն , | Հաւատք ; |
| Սպաննութիւն , | Հեզութիւն : |
| Գինովութիւն , | |
| Անառակութիւն : | |

Անոնք որ ասանկ բաներ կընեն՝ Աստուծոյ Արքայութիւնը չեն ժառանգեր :

Ամենեւին չեն պատժըւիր անոնք՝ որ Յիսուս Քրիստոսով Մարմինին (ուզածին) պէս չեն երթար , հապա Հոգիինին պէս :

Համար. խէ :

Ի՞նչ կըսէ Սուրբ Գիրքը :

Ոչ կռապաշտները , ոչ գողերը , ոչ գինովները , ոչ բամբասողները . անոնք Աստուծոյ Արքայութիւնը չեն ժառանգեր :

Անանկ է նէ որ բանը որ Ճշմարտութիւնով է, կամ պարկեշտութիւնով, կամ արդարութիւնով, կամ սրբութիւնով, կամ սիրով, կամ համբերութիւնով, անոնց վրայ մըտմըտայեք. ինչ աղէկ բաներ որ կըսորվիք, ու կըկարդաք, ու կըլըսեք, ան բաները ըրեք. ու խաղաղութեան Աստուածը ձեր հետը ըլլայ:

Համար. խե:

Պատիւով գըրված սովորական բառերը:

Հիմա՛ իմ սիրելի կարդացողներըս, պէտք է որ հոս սորվիք պատիւով գըրված քանի մը բառեր, որ ասկէց ետքը ուր տեսնաքնէ անոնք, դիւրաւ կարդաք:

| | | | |
|---|---|---|---|
| ա՟մ | . ամենայն: | ը՟ | . ըստ: |
| ա՟մքն | . ամենեքեան: | թ՟ի , ի՟. | թիւն: |
| ա՟մցն | . ամենեցուն: | թ՟ն , ն՟. | թեան: |
| յ՟ր | . այսինքն: | թ՟բ , բ՟. | թեամբ: |
| ա՟ծ | . աստուած: | թ՟է , է՟. | թենէ: |
| ա՟յ | . աստուծոյ: | կ՟մ , կ՟. | կամ: |
| ա՟վ | . աստուծով: | ք՟ս | . քրիստոս: |
| դ՟ր | . դորա: | ք՟սի , ք՟ի. | քրիստոսի: |
| դ՟մ | . դմա: | ն՟ր | , նորա: |
| դ՟ք | . դոքա: | ն՟մ | . նմա: |
| դ՟ց | . դոցա: | ն՟ք | . նոքա: |
| ե՟լ | . եւլ: | ն՟ց | . նոցա: |
| զ՟օ | . զորօրինակ: | ն՟ս | . նոսա: |
| ը՟ | . ընդ: | ո՟պ | . որպէս: |

| | | | |
|---|---|---|---|
| պն , պ. | · պէս: | տր | · տէր: |
| սբ | · սուրբ: | տռն , տն | · տեառն: |
| սր | · սորա: | տբ | · տերամբ: |
| սմ | · սմա: | ք | · քան: |
| սց | · սոցա: | քս | · քրիստոս: |
| վն | · վասն: | քսի , քի | · քրիստոսի: |
| վր | · վերայ: | ևն | · և այլն: |

---

## Կէտերուն անունները :

| | | | |
|---|---|---|---|
| Բութ | (՝) | Շեշտ | (՛) |
| Ստորակէտ | (,) | Պարոյկ | (՞) |
| Մնակակէտ | (՚) | Պատիւ | (՟) |
| Միջակէտ | (.) | Ենթամնայ | (-) |
| Վերջակէտ | (:) | Փարենթաղիս | ( ) |





Համար · խը :

Յն Քն երբոր աշխարհի վրայ էր՝ շատ կըսիրէր պզտի տղաքները ու աղջիկները :

Մէկ օր մըն ալ Յիսուսին քովը տղաքներ ու աղջիկներ բերին՝ որ ձեռքը անոնց վրայ դնէ ու օրհնէ անոնք :

Բայց իր աշակերտները տղաքը բերողները կըչախէին , ու չէին ուզեր որ Յնի քովը գան :

Յն երբոր աս բանը տեսաւ , սրդողեցաւ իր աշակերտներուն · ու ըսաւ , Թող տըվէք տղաքը Թող քովս գան :

Ու երբոր տղաքը իրեն քովը գացին , գիրկը առաւ անոնք , ձեռքը վրանին դրաւ , ու օրհնեց անոնք :

Ով Տէր իմ Յն Քն , ես ալ ան տղոցը մէկին պէս օրհնէ , ու քու Սրբային ձեռքիդ շուքին տակը իս պահէ :

Ես կը հաւատամ Տէր իմ, որ դուն երկրի վրայ Եղած ատեններդ ինչպէս որ կը սիրէիր տը-ղաքները ու աղջիկները, անանկ ալ հիմա եր-կինքէն կը սիրես պզտիկ տղաքը ու աղջիկները, ու քու օրհնութիւնդ կը խըրկես անոնց վրայ:

Արեւի Յիսուս դուն՝ աշխարհ եկար,
Մարմին առնելով տղայ մը եղար.
Իմաստութիւնով ու տարիքը շնորհքով,
Հնազանդութեամբ կատարեալ մեծցար:

Ան բարիները, Տէր, ինծի ալ տուր,
Իմ մանկութիւնս շնորհքով մեծցուր.
Ես կը փափաքիմ քեզի պէս ըլլալ,
Կը խնդրեմ քեզմէ փափաքըս լեցուր:





Համար . խէ :

Յս մէկ օր մը Նային քաղաքը կերթայրկոր . ու շատ մարդիկ ու իր աշակերտները ետևէն գացին :

Երբոր քաղաքին դրանը մօտեցաւ , Նայիս որ քաղաքէն մեռելմը կըհանէինկոր . որ ան՝ որբե֊վարի կնկան մը մէկ հատիկ զաւակն էր , ու կը֊տանէինկոր թաղելու :

Խեղճ որբևվարի կնիկը իր մէկ հատիկ զաւա֊կին մեռնելուն համար շատ կսկիծ ունէր , ու կուլարկոր :

Յիսուս երբոր տեսաւ կնիկը՝ շատ մեղքցաւ , ու ըսաւ անոր , մի՛ լար :

Իսանկ գնաց ձաղին քովը՝ մեռելին մօտեկ֊ցաւ , ու ըսաւ . տղայ , քեզի կըսեմ , ելիր :

Սէյմալ Նայիս մեռելը ողջընցաւ ելաւ նստաւ ձաղին մէջ , ու սկըսեց խօսիլ . մայրը

երբոր տեսաւ շատ ուրախացաւ , ու իր սիրական տղան առաւ տուն տարաւ :

Յ՜ս Ք՜ս դատաստանին օրը ամէնուս սիրելի ըլայ ան ողին ըսած խօսքը · ձեզի կըսեմ մեռելներ ելէք , ողջ ըլցէք :

Ա՛ն ատենը ամէնս ալ սիրելի ողջ ըլլանք , ու իր առջեւը կայնինք որ մեզ դատէ :

Ո՛վ տէր իս մի ամըչցուներ ան օրը · ուրախացուր իմ հոգիս , իս Նորկինքը Արքայութիւնը տանելով · որ հոն յաւիտենական յաւիտեններ քեզի հետ ապրիմ , ու քեզ փառաւորեմ :

Ամարդասէր փրկիչ հիմայ է ժամը ,
Այսօր է ահա փրկութեան օրը ·
Ներէ մեղքերըս փրկէ իմ հոգիս ,
Կըխընդրեմ յիշէ իս ան մեծ օրը :





Համար. խբ:

Այս պատկերին մէջը գրված մարդը երկու տղայ ունէր. մէկ օր մը պզտի տղան եկաւ իրեն ըսաւ թէ, Հայր, քու ունեցած ապրանքէդ ինծի ինկած բաժինը տուր. ան ալ ունեցածը բաժնեց անոնց:

Քանի մը օրէն ետքը պզտի տղան ժողվեց ամէն բաները՝ ու հեռու երկիր մը գնաց. ու հոն անառակութիւն ընելով ունեցածը փճացուց:

Երբոր ան երկիրը սաստիկ սով մը եկաւ, ու ինքը աղքատցաւ. ուստի ելաւ գնաց քաղաքացիի մը քով մտաւ. ան ալ արտը խրկեց ինքը որ երթայ իր խոզերը արծէ:

Անառակ որդին անօթութենէն կըմարէր, ու կուզէր որ խոզերուն կերած եղջիւրովը իր փորը լեցունէ. ան ալ մէկը չէր տար իրեն:

Խոսքը խելքը վրան գալով ըսաւ ․ իմ հօրս տանը քանի՜ բանուորներ կան հացով լըցված ու ես հոս սովէն կըմեռնիմ կըկորսըվիմ :

Ելլամ իմ հօրս երթամ , ու իրեն ըսեմ ․ ով հայր , մեղայ յերկինս ու քու առջեւդ ․ ես արժանի չեմ քեզի որդի ըսվելու , իս քու բանվորներուդ մէկին պէս ըրէ :

Ու ելաւ իր հօրը գալու , ու դեռ որ ինքը հեռուն էր , հայրը տեսաւ՝ ու մեղքըցաւ , ելաւ անոր դէմը վազեց , շըլըւ իրը պըլըլըվեցաւ՝ ու համբուրեց անիկայ :

Տղան ալ իրեն ըսաւ , ով հայր , մեղայ յերկինս ու քու առջեւդ ․ ես արժանի չեմ քեզի որդի ըսվելու :

Հայրը դարձաւ ծառաներուն ըսաւ ․ շուտով իր առջի կապան հանեցէք , ու հագցուցէք , ու մատնին ձեռքը դըրէք , ու կօշիկներն ալ ոտքը․ ու գէր եզը բերէք մորթեցէք , որ ուտենք ու ուրախանանք ․ ինչու որ աս իմ որդիս մեռած էր՝ ու ողջըցաւ , կորսըված էր ու գըտնըվեցաւ ․ ու անանկ սկըսեցին ուրախութիւն ընել :

Ընդ անառակին որդւոյ գոչեմք
    Ու Հայրդ գըթած ,
Մեղաք յերկինս և առաջի քո
    Քաւիչ յանցանաց ․
Եւ ընդ առաջ սիրով դըրկեա համբուրիւ
Մաքրեա զմեզ ՚ի մեղաց մերոց :



Համար. ԻԺ:

Մովսէս մարգարէն երբոր Իսրայելացիները Եգիպտոսէն հանեց ու աւետեաց երկիրը պիտի տանէր Ա.Յ հրամանովը, անապատին մէջը ջուր չկար ժողովուրդին խմելու. ուստի գացին Մովսէսին ըսին, մեզի ջուր տուր որ խմենք:

Մովսէս ալ երբոր Ա.Յ աղաչեց, Ա.Ծ հրամանն ըրաւ որ իր գաւազանը ձեռքը առնէ, ու ժողովուրդին ծերերէն հետը առնէ երթայ Քորեբ լեռը. ու հոն ապառաժ քարին որ զարնէ գաւազանովը, քարէն ջուր պիտի ելլայ ժողովուրդին խմելու:

Ա.Յ ըսածին պէս երբոր Մովսէս գաւազանը քարին զարկաւ ամէն ժողովուրդին առջին, քարէն անանկ աղբիւր մը բղխեց, որ գետի պէ

կըվազէր կերթար ջուրը · ուստի ժողովուրդը շատ տխրախտացաւ աս բանիս վրայ , ու փառք տուին Այ որ իրենց ողորմեցաւ :

Հիմայ ան ապառաժ քարը օրինակ էր Քի · ու անկէց բղխած աղբիւրը օրինակ էր ան պատուական արիւնին՝ որ Քի կողէն աղբիւրի պէս վազեց :

Աս պատուական աղբիւրը՝ չէ թէ մարմնաւոր ծարաւութիւն կանցունէ կամ աղտը կըմաքրէ ան հին աղբիւրին պէս՝ հապա՝ հոգիներնուս մեղաց աղտոտութիւնը կըլըվա ու կըսրբէ :

Էմմանուէլ Տէր Յիսուս ,
Աղբիւր կենաց մեզ բացիր ·
Ողորմեցար հոգինուս ,
Խաչ ու մեռնիլ յանձն առիր :

Քու սուրբ կողից արիւնը ,
Աղբիւրի պէս որ վազեց ·
Աւազակին մեղքերը ,
Լըւաց մաքրեց ու սրբեց :

Գառն Աստուծոյ հոգինիս ,
Ան աղբիւրին մէջ լըվա ·
Կաղաչենք , Տէր , մեղքերնիս
Սուրբ արիւնովդ լըվա :



Պատկեր . Ծ :

Վարժութիւն գրաբառ կարդալու :

Եւ յաւուր առաջնում բաղարջակերացն՝ յորժամ զզատիկն զենուին, ասեն ցնա աշակերտքն . ո՞ւր կամիս՝ երթիցուք պատրաստեսցուք, զի կերիցես զզատիկն: Եւ առաքէ երկուս յաշակերտաց անտի՝ և ասէ ցնոսա . երթայք 'ի քաղաքն, և իբրև մտանիցէք 'ի քաղաքն՝ պատահեսցէ ձեզ այր մի, որ սափոր ջրոյ յուս ունիցի, երթայք զհետ նորա : Եւ յոր տուն մտանիցէ, ասասջիք տանուտէրն . վարդապետ ասէ՝ ուր են իջավանքն, ուր աշակերտօքս ուտիցեմ զզատիկն : Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ՝ զարդարեալ . անդ պատրաստեսջիք մեզ : Եւ գնացին պատրաստել աշակերտքն նորա . եկին 'ի քաղաքն, և գտին ոպ ասացն նց

և պատրաստեցին զզատիկն ։ Եւ իբրև երեկոյ եղև, ծղրայ երկոտասանիւքն հանդերձ ։

Եւ իբրև բազմեցան՝ և դեռ ուտէին, ասէ Յս. ամէն ասեմ ձեզ՝ զի մի ոմն ՚ի ձէնջ մատնելոց է զիս, որ ուտեսցէն ընդ իս։ Եւ նոքա սկսան տրտմել՝ և ասել ցնա, բաղ միոջէ. մի թէ ես իցեմ, և միւսն՝ մի թէ ես իցեմ ։ Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնս. մի յերկոտասանից այտի, որ մխեաց ընդ իս ՚ի սկաւառակդ ։ Այլ որդի մարդոյ երթայ՝ ոպ և գրեալ է վ՛ն նր. բայց վայ իցէ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռս որդին մարդոյ մատնեսցի. լաւ էր նմ՛ եթէ չէր իսկ ծնեալ մարդն այն ։

Եւ մինչդեռ ուտէին, առեալ յսի հաց՝ օրհնեաց և եբեկ՝ ետ նց՝ և ասէ. առէք՝ այդ է մարմին իմ։ Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ ետ նց, և արբին ՚ի նմանէ ամենեքեան ։ Եւ ասէ ցնոսա. այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ փոխանակ բազմաց հեղու ։ Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ ևս յաւելից ըմպել ՚ի բերոյ որթոյս, մինչև ցօրն յայն, յորժամ արբից զնա նոր յարքայութեան այ՛ ։

Եւ գոհացեալ ելին ՚ի լեառն ձիթենեաց ։





Համար . ծա :

Իսկ պիղատոս՝ իբրև զմիտս կամեցաւ հաճել
զամբոխին , արձակեաց նց զբարաբբայն , և զյս
գան հարեալ՝ ետ 'ի ձեռս զի 'ի խաչ ելանիցէ :
Եւ զինուորքն տարան զնա 'ի ներքս 'ի գաւիթն՝
ուր հրապարակն էր . և կոչեն միանգամայն զամ
զգունդն : Եւ զգեցուցանեն նմ քղամիդ կարմիր
և ծիրանիս , և եդին 'ի գլուխ նր պսակ արա-
րեալ 'ի փշոյ : Եւ սկսան ողջոյն տալ նմա՝ և
ասել . ողջ եր արքայդ հրէից : Եւ ծեծէին
զգլուխն եղեգամբ , և թքանէին ընդ երեսս , և 'ի
ծունր իջեալ երկիրպագանէին նմա : Եւ իբրև
կատակեցին զնա , մերկացուցին զքղամիդն և
զծիրանիս , և զգեցուցին նմա զիւր հանդերձ , և
ածին արտաքս զի 'ի խաչ հանցեն զնա : Եւ ու-
նէին պահակ զսիմովն կիւրենացի՝ որ ընդ այն
անցանէր եկեալ յագարակէ , զհայրն աղեք-

սանդրի և ռուփայ՚, զի բարձցէ զխաչափայտն նր։ Եւ ածեն զնա ՚ի գողգոթա տեղի մի, որ թարգմանի տեղի կառափելոյ ։ Եւ տային նմ՝ զինի զմռսեալ, և նա ոչ առ. և հանեն զնա ՚ի խաչ ։ Եւ բաժանեցին զհանդերձս նր, արկեալ վիճակս ՚ի վր, թէ ո՛ զինչ առնուցու ։ Էր ժամ երրորդ, և հանին զնա ՚ի խաչ ։ Եւ էր գիր վնասու նր գրեալ, թէ թագաւոր է հրէից ։ Եւ ընդ նմա հանին ՚ի խաչ երկուս աւազակս, մի ընդ աջմէ և մի ընդ ահեկէ նորա ։ Եւ լցաւ գիրն որ ասէ, թէ ընդ անօրէնս համարեցաւ ։ Եւ որք անցանէինն հայհոյէին զնա՝ շարժեալ զգլուխս իւրեանց, և ասէին. վահ, որ քակէիր զտաճարն՝ և զերիս աւուրս շինէիր. ապրեցո զանձն քո՝ և էջ ՚ի խաչէդ ։ Նոյնպէս և քահանայապետոյցն այպն արարեալ ընդ միմեանս հանդերձ դպրօքն՝ և ասէին. զայլս ապրեցոյց՝ զանձն ոչ կարասցէ ապրեցուցանել ։ Ք͞ոդ արքայդ իսրայէլի, իջցէ այժմ ՚ի խաչէ այտի, զի տեսցուք և հաւատասցուք դմա ։ Եւ որ ընդ նմա ՚ի խաչն ելեալ էին՝ նախատէին զնա ։ Եւ իբրև վեց ժամ եղև՝ խաւար կալաւ զա͞մ երկիր մինչև ցինն ժամն։ Եւ յիններորդ ժամուն աղաղակեաց Յ͞ս ՚ի ձայն մեծ՝ և ասէ. էլի էլի լամա սաբաքթանի. որ թարգմանի, Ա͞ծ իմ, Ա͞ծ իմ, ընդէ՞ր թողեր զիս . . . Եւ յ͞ս արձակեաց ձայն մեծ՝ և եհան զոգի ։



Համար. ԾԲ:

Եւ 'ի մէջ գիշերոյն Պօղոս և Շիղայ կային յաղօթս՝ և օրհնէին զա̃ծ. ունկն դնէին նոցա կալանաւորքն: Եւ եղև յանկարծակի շարժումն մեծ, մինչև շարժել հիմանց բանտին, և բացան անդրէն դրունքն ամ̃, և ամենեցուն կապանքն լուծան: Իբրև զարթեաւ բանտապետն՝ և ետես բացեալ զդուրս բանտին, ձգեաց զսուսեր՝ և կամէր երթալ զիւրովին. կարծէր փախուցեալ զկապեալսն: Եւ կոչեցեալ 'ի ձայն մեծ Պօղոս՝ և ասէ, մի ինչ գործեր ընդ անձն քո չար, քանզի ամենեքին աստ եմք: Խնդրեաց լոյս և դիմեաց 'ի ներքս. և զահի հարեալ՝ անկաւ առաջի Պօղոսի և Շիղայի: Եւ ածեալ զնոարտաքս՝ ասէ. տեարք զի՞նչ պարտ է ինձ առնել զի ապրեցայց: Եւ նք ասեն. Հաւատա

՚ի Տր Յսն , և ապրեսցիս դու՝ և ա՛մ տուն քո : Եւ խօսեցան նմ՛ զբանն Տն , և ամենեցուն որ էին ՚ի տան նր : Եւ առեալ զնս ՚ի նմին ժամու գիշերոյն՝ լուաց ՚ի վիրաց անտի · և մկրտեցաւ ինքն և իւրքն ա՛մ անդէն վաղվաղակի : Եւ ածեալ զնս ՚ի տուն իւր , եդ առաջի նց սեղան · և ուրախ եղև ա՛մ տամբն հաւատացեալ յԱ՛ծ : Եւ իբրև այգ եղև՝ առաքեցին զօրագլուխքն զնուիրակսն , և ասեն · արձակեա զարսդ զայդոսիկ : Եւ պատմեաց բանտապետն զբանսն՝ Պօղոսի , եթէ առաքեցին զօրագլուխքն զի արձակեսջիք · արդ՝ ելէք և երթայք խաղաղութեամբ : Իսկ Պօղոս ասէ ցնս · գան հարեալ զմեզ հրապարակաւ՝ արս անմեղս հռովմայեցիս արկին ՚ի բանտ, և արդ լռելեա՞յն հանեն զմեզ · ոչ այդպէս , այլ եկեսցեն ինքեանք իսկ հանցեն զմեզ : Եւ պատմեցին զօրագլխացն նուիրակքն զբանսն · զահի հարան իբրև լուան՝ թէ հռովմայեցիք են · և եկեալ աղաչեցին զնս: Եւ իբրև հանին, աղաչեցին գնալ ՚ի քաղաքէն : Եւ ելեալ ՚ի բանտէն՝ մտին ՚ի լիւդեայ · և տեսեալ զեղբարս՝ մխիթարեցին զնս , և գնացին :

# ԵՐԳ.

Ո՛վ մեծ Պաշտպան մեր փոքր հասակին ,
Լսէ՛ մեր խոնարհ աղօթքի ձայնին ·
Քեզի՛ ամէնս ալ կաղաչենք սրտանց ,
Տէ՛ր Յիսուս Քրիստոս , Բարեկամ մանկանց :

Քու ողորմութեամբդ ամէն օր կապրինք ,
Քու գթութեամբըդ կանք ու կըշարժինք ·
Ամէն մեղքերնիս ներէ՛ , Տէ՛ր Աստուած ,
Կաղաչենք եղիր Բարեկամ մանկանց :

Սուրբ շնորհքովըդ դուն մեզի մեծցո՛ւր ,
Հաւատքով Յուսով Սիրով զօրացո՛ւր ·
Սուրբ պատուիրանքըդ բոլո՛ր մեր սրտանց ,
Տո՛ւր մեզի պահել , Բարեկամ մանկանց :

Երբոր մեր կեանքին օրերը հատնի ,
Ու մարմիններնուս հոգինիս զատուի ·
Անմահ հոգինիս երկնային փառաց ,
Արժանի ըրէ , Բարեկամ մանկանց :

### Պիտանի Հարցումներ :

Հ . Տղաս , կրնաս ըսել ինծի , ո՞վ ստեղծեց քեզի :

Պ . Այն մեծ Աստուածը՝ որ երկինքն ու երկիրը ստեղծեց :

Հ . Աստուած ի՞նչ կընէ քեզի համար :

Պ . Գիշեր և ցորեկ կըպահէ զիս ամէն վտանգներէն , ու միշտ աղէկութիւն կընէ ինծի :

Հ . Ուրեմն ի՞նչ պէտք է որ ընես այն մեծ Աստուծոյ , որ այսչափ բարերար է քեզի :

Պ . Նախ՝ պէտք է որ սորվիմ զինքը ճանչնալ , և ապա ջանամ ամէն կերպով իրեն հաճոյ ըլլալ :

Հ . Աստուած ո՞ւր կըսորվեցընէ մեզի՝ զինքը ճանչնալ , ու իր կամքը կատարել :

Պ . Աստուածաշունչին մէջ :

Հ . Կրնաս ըսել թէ ո՞վ է Աստուած :

Պ . Աստուած՝ Հոգի մըն է , և թէպէտ մենք չենք կրնար տեսնել զինքը , բայց ան կըտեսնէ , գիտէ , ու կրնայ ընել ամէն բան :

Հ . Ի՞նչ պարտիս ընել որ Աստուծոյ հաճոյ ըլլաս :

Պ . Պարտիմ կատարել իմ պարտաւորութիւնս որ ունիմ դէպի Աստուած և դէպի մարդ :

Հ . Ի՞նչ է քու պարտաւորութիւնդ դէպի Աստուած :

Պ. Իմ պարտքս է վախնալ իրմէն, ու զինքը պատուել, սիրել, ու ծառայել իրեն, իրեն աղօթել, ու զինքը փառաւորել:

Հ. Ի՞նչ է քու պարտաւորութիւնդ դէպի մարդ:

Պ. Իմ պարտքս դէպի մարդ ան է, որ հնազանդիմ ծնողացս, միշտ ճշմարիտը խօսիմ, ու պարկեշտ և բարեսէր ըլլամ:

Հ. Աստուծոյ հաճոյ ըլլալուդ ի՞նչ օգուտ կըլլայ քեզի:

Պ. Ան ատենը ես Աստուծոյ մէկ որդին կըլլամ, ու ինքը հայր ու բարեկամ կըլլայ ինծի յաւիտեան:

Հ. Ի՞նչ պիտի ըլլաս, թէ որ դուն Աստուծմէ չվախնաս, չսիրես զինքը ու չուզես իրեն հաճոյ ըլլալու:

Պ. Ան ատենը չար տղայ մը պիտի ըլլամ, և ամենակարող Աստուած սաստիկ բարկանալու է ինծի:

Հ. Ինչո՞ւ համար կըվախնաս Աստուծոյ բարկութենէն:

Պ. Վասն զի՝ ինքը կրնայ մեռցընել իմ մարմինս, ու թշուառ ընել իմ հոգիս մեռնելէս ետև:

Հ. Բայց արդէն բան մը չըրի՞ր դուն որ Աստուած բարկանար քեզի:

Պ. Այո՛. կըվախնամ թէ շատ անգամ

մեղք գործեցի Աստուծոյ դէմ, ու իր բարկութեանը արժանի եղայ :

Հ. Ի՞նչ է Աստուծոյ դէմ մեղք գործելը :

Պ. Աստուծոյ դէմ մեղք գործելը, Աստուծոյ արգիլած բանը ընել, ու հրամայածը չընել է :

Հ. Ի՞նչ պէտք է որ ընես դուն Աստուծոյ բարկութենէն ազատելու, որուն արժանի եղար քու մեղքերովդ :

Պ. Պարտիմ ցաւիլ իմ մեղքերուս վըրայ, ու աղաչել Աստուծոյ որ ներէ ինծի առջի ըրածներս, ու ապառնի ժամանակը պարտիմ լաւ եւս ծառայել անոր :

Հ. Արդեօք քեզի ներելո՞ւ է Աստուած, թէ որ իրմէն թողութիւն խնդրես :

Պ. Եթէ վստահիմ իր ողորմութեանը՝ կը յուսամ որ պիտի ներէ ինծի Յիսուս Քրիստոսի ըրած հնազանդութեանը ու կրած չարչարանքներուն համար :

Հ. Գիտես ո՞վ է Յիսուս Քրիստոս :

Պ. Աստուծոյ մէկ հատիկ որդին է, որ երկինքէն իջաւ, մեզ՝ մեր մեղքերէն ու Աստուծոյ բարկութենէն փրկելու :

Հ. Ի՞նչ ըրաւ Քրիստոս մարդը փրկելու համար :

Պ. Հնազանդեցաւ նոյն ինքն Աստուծոյ օրէնքին, ու մեզի ալ սորվեցուց որ հնազանդինք անոր,

Հ. Ի՞նչ չարչարանք կրեց Քրիստոս, մարդը փրկելու համար:

Պ. Ինքը մեղաւորներուն համար մեռաւ, որոնք Աստուծոյ հրամանը չպահեցին, ու արժանի եղան մահուան:

Հ. Ո՞ւր է հիմայ Յիսուս Քրիստոս:

Պ. Անիկայ վերստին յարութիւն առնելով երկինքը գնաց, որ հո՛ն տեղ պատրաստէ անոնց համար, որոնք Աստուծոյ կըծառայեն ու կը սիրեն իր որդին Յիսուսը:

Հ. Դուն ինքնիրենդ կրնաս սիրել Աստուած ու ծառայել անոր:

Պ. Ոչ. ես չեմ կրնար ընել ան բանը ինքնիրենս. բայց Աստուած կօգնէ ինծի իր Սուրբ Հոգիովը, թէ որ ես խնդրեմ իրմէն զանիկայ:

Հ. Յիսուս Քրիստոս վերստին աշխարհք գալո՞ւ է:

Պ. Քրիստոս վերստին պիտի գայ, և հաշիւ ուզէ ինձմէն ու բոլոր մարդոցմէ մեր ըրած բաներուն համար:

Հ. Ինչո՞ւ համար աս հաշիւը տրուելու է:

Պ. Անոր համար որ Աստուծոյ որդիքը ու արդարները անանկ ալ մեղաւորները իրենց գործքերուն փոխարէնը ընդունին:

Հ. Թէ որ գէշ ըլլաս ի՞նչ պիտի ըլլայ քեզի:

Պ. Եթէ գէշ ըլլամ նէ, դժոխքին յա-

ւխտանսական հուրին մէջ պիտի ձգվին, թշուառ և չար էակներուն հետ :

Հ. Ո՞ւր պիտի երթաս թէ որ Աստուծոյ մէկ որդին ըլլաս :

Պ. Թէ որ Աստուծոյ մէկ որդին ըլլամ, երկինքը պիտի երթամ, և հոն պիտի բնակիմ Աստուծոյ հետ յաւիտեան :

---

Պատուիրանները Գիրքէն :

" Ես եմ քու Տէր Աստուածդ որ հանեցի քեզ Եգիպտացւոց երկրէն ծառայութեան տունէն : Օտար աստուածներ չպիտի ունենաս իմ աչքիս առջևը :

Դուն քեզի փորուած կուռք չպիտի շինես, ոչ ալ ամէն ան բաներուն նմանութիւնը՝ ինչ որ վերը երկինքը՝ և ինչ որ վարը երկրի վրայ՝ և ինչ որ երկրին տակը ջուրերուն մէջն է : Երկրպագութիւն չպիտի ընես անոնց, ու չպիտի պաշտես անոնք . քանզի ես եմ քու Տէր Աստուածդ՝ Աստուած նախանձոտ . հայրերուն մեղքերը կըհատուցանեմ իրենց որդւոցը զիս ատողներուն երեք և չորս պորտին, ու ողորմութիւն կընեմ զիս սիրողներուն հազար պորտին՝ և անոնց որ իմ պատուիրանքներս կըպահեն :

Քու Տէր Աստուծոյդ անունը սնոտի բաներու վրայ չպիտի առնես . ինչու որ քու Տէր Աստ-

ուածդ չպիտի սրբէ անիկա՝ որ իր անունը սընոտի բաներու վրայ կառնէ :

Զգուշ կեցիր Շաբաթ աւուր անիկայ սըրբելու , ինտոր որ քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց : Վեց օր պիտի գործես , ու քու բոլոր գործդ ընես : Եօթներորդ օրը քու Տէր Աստուծոյդ Շաբաթն է , քու բոլոր գործդ չպիտի գործես ան օրը , դուն և քու տղադ և քու աղջիկդ , և քու ծառադ և քու աղախինդ , քու եզդ և քու էշդ , և ամէն քու անասունդ , և քու դրանդ ներսը եղող օտարականը · որ քու ծառադ և քու աղախինդ հանգստանայ ինտոր որ դուն ալ : Ու միտքդ բեր որ Եգիպտացւոց երկրին մէջը ծառայ էիր դուն , ու քու Տէր Աստուածդ հզօր ձեռքով և բարձր բազուկով քեզ անկից հանեց · անոր համար քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց Շաբաթ օրը պահելու և անիկա սրբելու :

Պատուէ՛ քու հայրդ և քու մայրդ , ինտոր որ քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց · որ բարի ըլլայ քեզի , ու երկան ապրիս ան երկրին վրայ՝ որնոր քու Տէր Աստուածդ պիտի տայ քեզի :

Մի՛ շնար :

Մի՛ սպաններ :

Մի՛ գողնար :

Քու ընկերիդ վրայով սուտ վկայութիւն մի՛ ըներ :

Քու ընկերիդ կնոջը մի՛ ցանկար · ու քու ընկերիդ տանը մի՛ ցանկար , ո՛չ ալ անոր արտին , ո՛չ ալ անոր ծառային , ո՛չ ալ անոր աղախինին , ո՛չ ալ անոր եզին · ո՛չ ալ անոր էշին , ո՛չ ալ անոր ամէն անասունին , և ամէն ան բաներուն որ քու ընկերինդ է ։ Երկրորդ Օրէնք · Ե · 7—22 ։

---

### Պատուիրանքներուն Ամփոփումը ։

Վարդապետ , ո՞ր պատուիրանք մեծ է օրէնքին մէջը ։ Ու Յիսուս ըսաւ անոր , Քու Տէր Աստուածդ պիտի սիրես քու բոլոր սրտէդ , և քու բոլոր անձէդ , և քու բոլոր մտքէդ ։ Աս է մեծը ու առաջին պատուիրանքը ։ Երկրորդը ասոր նման՝ քու ընկերդ պիտի սիրես քու անձիդ պէս ։ Աս երկու պատուիրանքէս կախուած են բոլոր օրէնքները և մարգարէները ։ Մատ · ԻԲ · 36—39 ։

### Օրէնքին սպառնալիքը ։

Անոնք որ օրէնքին գործքերէն են՝ անէծքի տակ են · որովհետև գրուած է Թէ՝ Անիծեալ ըլլայ ամէն մարդ՝ որ օրէնքին գրքերը գրուածներուն ամէնուն մէջ չկենար բոլորը կատարելու ։ Գաղատ · Գ · 10 ։

### Աւետարանին Քրիստոնէութիւնը:

Յայտնի ըլլայ ձեզի մարդիկ եղբայրներ, որ ասով ձեզի մեղաց թողութիւն կըքարոզուի: Եւ ան ամէն բաներէն որ Մովսէսին օրէնքովը չկըցիք արդարանալ, ասով ամէն ով որ հաւատայ, կարդարանայ: Գործ. ԺԳ. 38, 39: Վասն զի Աստուած անիկայ որ մեղք չէր գիտեր, մեզի համար մեղաւոր սեպեց. որ մենք անոր ձեռքովը Աստուծոյ արդարները եղած ըլլանք: Բ. Կորնթ. Ե. 21:

---

### Աղօթք Տէրունական:

#### Գրաբար:

Հայր մեր որ յերկինս. սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա զմեզ 'ի չարէն. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն:

#### Աշխարհաբար:

Ով հայր մեր՝ որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ: Քու թագաւորութիւնդ գայ, քու կամքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ: Մեր ամէն աւուր հացը՝ այսօր մեզի տուր: Եւ մեզի ներէ մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կըներենք մեր պարտականներուն: Ու մեզ փորձութեան մի տանիր. հապա չարէն մեզ ազատէ, ինչու որ քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը, ու փառքը, յաւիտեանս, ամէն:

## Հանգանակ Նիկիական :

### Գրաբառ :

Հաւատամք՝ ՚ի մի Աստուած Հայրն ամենակալ. յարարիչն երկնի և երկրի. երևելեաց և աներևութից: Եւ ՚ի մի տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին. այսինքն յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ. լոյս ՚ի լուսոյ. Աստուած ճշմարիտ. յԱստուծոյ ճշմարտէ. Ծնունդ և ոչ արարած: Նոյն ինքն ՚ի բնութենէ Հօր. որով ամենայն ինչ եղև յերկինս և ՚ի վերայ երկրի. երևելիք և աներևոյթք: Որ յաղագս մեր մարդկան, և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ ՚ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ զմարմին, զհոգի, և զմիտ. և զամենայն որ ինչ է ՚ի մարդ. ճշմարտապէս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ. յերրորդ աւուր յարուցեալ.

### Աշխարհաբառ :

Կը հաւատամք մէյ Աստուծոյ ամենակալ Հօրը, երկինքին ու երկրի, երևցածներուն ու աներևոյթներուն Ստեղծողին: Եւ մէյ Տէրոջ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ Որդիին. Հօր Աստուծմէ ծնած միածին. այսինքն Հօրը էութենէն: Աստուած Աստուծմէ. լոյս լուսէն. ճըշմարիտ Աստուած ճշմարիտ Աստուծմէ. Ծնունդ ու չէ թէ արարած: Նոյն ինքը Հօրը բնութենէն է, որ անով եղաւ ամէն բան երկինքին մէջ ու երկրի վրայ, երևցածները ու աներևոյթները: Որ ինքը մեզի մարդոց և մեր փըրկութեանը համար՝ Երկինքէն իջած մարմնացաւ՝ մարդ եղաւ՝ սուրբ կոյս Մարիամէն ծնաւ կատարելապէս՝ Սուրբ Հոգիով: Որով առաւ մարմին՝ հոգի՝ ու միտք՝ և ան ամէն հանգամանքները՝ որն որ մարդ մը ունի, ճշմարտապէս ու չէ թէ կարծիքով: Չար-

ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։ Հաւատամք և 'ի Սուրբ Հոգին. յանեղն և 'ի կատարեալն։ Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն 'ի Յորդանան. քարոզեաց առաքեալսն և բնակեցաւ սուրբսն։ Հաւատամք 'ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի։ 'Ի մի մկրտութիւն. յապաշխարութիւն. 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։ 'Ի յարութիւնն մեռելոց. 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց։ Յարքայութիւնն երկնից և 'ի կեանսն յաւիտենականս։

չարչարուած, խաչուած, [illegible] ված. իրեք օրէն ետքը [illegible] րութիւն առած. նոյն մարմնով երկինքը ելած՝ Հօրը աջ կողմը նստաւ։ Նոյն մարմնովը ու Հօրը փառքովը գալու է կենդանիները ու մեռածները դատելու, որուն թագաւորութիւնը վերջ չունի։ Կըհաւատանք և անեղ ու կատարեալ Սուրբ Հոգիին, որ օրէնքներով և մարգարէներով ու Աւետարաններով խօսեցաւ։ Որ Յորդանան գետը իջաւ, խըր ըկըրուած փրկիչը քարոզեց, ու սուրբերուն մէջը բնակեցաւ։ Կըհաւատանք նաև մի միայն ընդհանրական ու առաքելական Եկեղեցիին. մէկ մկրտութիւնին, ապաշխարութիւնին, քաւութիւնին ու մեղքի թողութիւնին։ Մեռելներուն յարութիւն առնելուն, հոգիներուն ու մարմիններուն յաւիտենական դատաստանին. Երկնից արքայութեանը ու յաւիտենական կեանքին։

ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА АРМ.-ССР ИМ. А. МЯСНИКЯНА